ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դ. Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Ազգագրությունը որպես գիտություն Հայաստանում վերջնականապես ձևավորվեց XIX դարի վերջին և XX դ. սկզբին՝ «Ազգագրական հանդեսի» (1896—1916 թթ., Թիֆլիս, ընդամենը 26 հատոր) և Հայոց ազգագրական ընկերության ծավալած բազմաբեղուն գործունեության շնորհիվ, որոնց հիմնադիրը, ղեկավարն ու ամենաջանադիր աշխատակիցն էր ականավոր ազգագրագետ, բանագետ ու հնագետ Երվանդ Լալայանը։ «Հանդեսը» պարբերաբար համակողմանի ազգագրական նյութեր էր հրատարակում պատմական Հայաստանի գավառների վերաբերյալ, որոնց մեծ մասի հեղինակն ինքը՝ Ե. Լալայանն էր։ «Հանդեսը» «Էմինյան ազգագրական ժողովածուի» (Մոսկվա. 1901—1911 թթ., 9 գիրք), «Բյուրակնի» (Կ. Պոլիս, 1890-ական թթ.) և մի շարք այլ պարբերականների հետ («Բազմավեպ», «Հանդես ամսօրյա», «Մշակ» և այլն) հարուստ նյութեր է տալիս հայ ժողովրդի անցյալի ազգագրությունն ուսումնասիրելու համար։

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո ազգագրությունը ևս իր պատշաճ տեղը գրավեց հայագիտական մյուս առարկաների շարքում, և հետզհետե հաստատուն հիմքեր ստեղծվեցին նրա զարգացման համար։ 1920—1940-ական թթ. ազգագրական գործն ամբողջությամբ կենտրոնացվեց Երևանում ստեղծված Հայաստանի պատմության պետական թանգարանում[1], ուր հենց սկզբից, ի թիվս այլ բաժինների, բացվեց նաև ազգագրության բաժին։ Ազգագրական նյութերի հավաքման և ուսումնասիրման գործն այժմ կատարվում էր այլ պայմաններում՝ պետության հովանավորությամբ և նյութական միջոցներով։ Երևան՝ թանգարան է տեղափոխվում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մոսկվա ուղարկված էջմիածնի թանգարանի, ինչպես նաև Թիֆլիսից՝ Հայոց ազգագրական ընկերության թանգարանի, Նոր-Նախիջևանի հայկական թանգարանի գույքը[2], որոնց մեջ զգալի տեղ էին բռնում ազգագրական ցուցոնները։ Այնուհետև, 1920-ական թթ. կեսերից, թանգարանային ֆոնդերը համալրելու և բանավոր ազգագրական նյութեր հավաքելու նպատակով ծավալվում է արշավախմբային եռանդուն գործունեություն։

Նոր ավյունով հավաքչական աշխատանքի են ձեռնարկում համբավավոր ազգագրագետ Ե. Լալայանը և ազգագրության մեջ չնայած նոր մուտք գործած,

---

[1] Այդ ընթացքում թանգարանի անվանումը մի քանի անգամ փոփոխվել է։ Նախապես, 1921 թ., այն կոչվում էր Հայաստանի պետ. թանգարան, ավելի ուշ վերանվանվեց Հայաստանի կուլտուր-պատմական թանգարան, 1935 թ.՝ պետ. պատմական թանգարան, որը կազմվեց նախորդի հնագիտական և ազգագրական բաժինների հիման վրա (տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հնագիտական աշխատանքները Հայաստանում, պետ. պատմական թանգարանի (այսուհետև՝ ՊՊԹ) «Աշխատություններ», Երևան, 1948, էջ 22—23)։ 1970 թ. կոչվում է Հայաստանի պատմության պետական թանգարան։

[2] Տե՛ս Կ. Ղաֆադարյան, նույն տեղում։

բայց հայ մշակույթին մատուցած ծառայություններով հայտնի Ստ. Լիսիցյանը, հետզհետե իրենց շուրջը համախմբելով երիտասարդների։ 1920-ական թթ. երկրորդ կեսին Արարատյան դաշտավայրում և Կոտայքում դաշտային նյութեր է հավաքում ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի գիտաշխատակից Ե. Լալայանը, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով տեղաբնիկների և Արևմտյան Հայաստանից ու Իրանից ներդաղթածների կենցաղային յուրահատկությունների վրա։ Աղգագրականից բացի հավաքում է բանահյուսական նյութեր, անում հնագիտական պեղումներ։ Հավաքչական աշխատանքին զուգընթաց Ե. Լալայանը իր ամբարած նյութերի հիման վրա ձեռնարկում է դրանց թեմատիկ ընդհանրացումը, մի բան, որ գրեթե բացակայում էր նրա նախահեղափոխական շրջանի գործունեության մեջ։ Այս առումով ուշագրավ են հատկապես հայերի ծիսական արարողությունների բնութագրմանը նվիրված նրա զուտ աղգագրական բնույթի հոդվածները[3]։

Նույն ժամանակաշրջանում, մինչև 1930-ական թթ. վերջերը, Ստ. Լիսիցյանը, նախ որպես ԽՍՀՄ ԳԱ պատմա-հնագիտական ինստիտուտի գիտաշխատակից, ապա որպես Հայաստանի պետ. պատմական թանգարանի աղգագրության բաժնի վարիչ, միայնակ կամ փոքր խմբով շրջագայում է Սյունիքի, Վայոց ձորի, Արցախի, Գեղարքունիքի, Ջավախքի, Լոռու, Շիրակի և այլ վայրերի հայկական գյուղերը, ինչպես նաև Երևանում և շրջակայքում բնակավորված արևմտահայերի մեջ, աղգագրական հարուստ նյութեր հավաքելով հատկապես հին կենցաղի, մասամբ նաև նոր պայմաններում դրանում կատարվող փոփոխությունների վերաբերյալ։ Այդ տարիների նրա դաշտային աշխատանքի արդասիքն է Հայաստանի տարբեր շրջանների ժողովրդական բնակարանի ուսումնասիրությանը նվիրված հոդվածաշարը, ուր կոնկրետ նյութերի քննությամբ համոզիչ փորձ է արվում ցույց տալու հայ դասական ճարտարապետության ակունքների կապը ժողովրդական բնակարանի համալիրի ճարտարապետության հետ[4]։ Այս շարքի մեջ առանձին ուշադրության է արժանի Շատախին վերաբերող հոդվածը, որը հետաքրքիր դիտողություններ է պարունակում նախնադարյան տոհմային կարգերի մի ուշագրավ հասարակական հաստատության՝ «հասակակիցների միությունների» վերապրուկային որոշ երևույթների մասին։ Մի այլ հոդված նվիրված է Հայաստանի լեռնավայրային մեծ ճանապարհների հանգուցակետերում եղած «սրբերի» և իջևանատների պատմական աղերսի քննությանը[5]։ Հմտորեն օգտագործելով կուտակած դաշտային նյութը և համապատասխան գրավոր աղբյուրների տեղեկությունները, Ստ. Լիսիցյանը դրանք ամփոփել երկու արժեքավոր մենագրություններում՝ նվիրված

---

3 Ե. Լալայան, Տղաբերքի սովորությունների զարգացումը հայոց մեջ, ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի (այսուհետև՝ ՀԳԱԻ) «Տեղեկագիր», Երևան, 1930—31, № 4—5։ Հուզարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում, նույն տեղում, 1928, № 3։

4 Ст. Лисициан, К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам), «Известия» Кавказского историко-археологического института (այսուհետև՝ КИАИ), Тифлис, 1925, т. III; Крестьянские жилища Высокой Армении, նույն տեղում, 1926, т. IV; Историко-этнографические очерки Шатаха (из материалов по изучению жилищ Армении), նույն տեղում, 1927, т. V; Нор-Баязетский азарашенк и заметки о крестьянских жилищах соседних районов—Памбакского и Даралагязского, նույն տեղում, т. VI; Крестьянское жилище Мегринского района, նույն տեղում։

5 Ст. Лисициан, «Святыни» у перевалов, «Советская этнография» (այսուհետև՝ СЭ), 1936, № 4—5.

Սյունիքի (Զանգեզուր) և Արցախի (Լեռնային Ղարաբաղ) հայերի պատմաազգագրական համակողմանի հետազոտությանը[6]։ Ստ. Լիսիցյանի ազգագրական գործունեության հանրագումարը եղավ հայ ժողովրդի նախահեղափոխական աղգագրությանը նվիրված նրա աշխատությունը, որը լույս տեսավ հեղինակի մահից (1947 թ.) հետո[7]։ Սույն աշխատությամբ հայ իրականության մեջ առաջին անգամ փորձ է արվում ակնարկային ձևով տալու հայ ժողովրդի անցյալի ազգագրության ամբողջական պատկերը։ Հեղինակը, հենվելով իր բազմակողմանի դիտելիքների և ազգագրագետի փորձառության վրա, հիմնականում հաջողությամբ է լուծել իր առջև դրված խնդիրը։ Այն լավագույն ատաղձ է՝ ժամանակի ընթացքում հայ ժողովրդի անցյալի ազգագրության հանգամանալից շարադրանքը տալու համար։ Վերջապես, տարիների դաշտային աշխատանքի փորձի հիման վրա, ժամանակի պահանջների անմիջական թելադրանքով, Ստ. Լիսիցյանը կազմեց և 1946 թ. հրատարակեց մի շատ կարևոր ձեռնարկ՝ ազգագրական ընդարձակ հարցարան[8]։ Սա երրորդ համապարփակ հարցարանն էր հայ իրականության մեջ[9], եթե նկատի չառնվեն Ե. Լալայանի, Ստ. Զելինսկու և ուրիշների կազմածները ազգագրության առանձին բնագավառների վերաբերյալ, որոնք թեմատիկ բնույթ ունեն և հրատարակված են «Ազգագրական հանդեսի» տարբեր համարներում։ Ստ. Լիսիցյանի կազմած հարցարանը խստորեն սիստեմավորված կարգով ընդգրկում է ժողովրդի մարդաբանությանը, տնտեսական զբաղմունքներին, նյութական ու հոգևոր մշակույթին, հասարակական-ընտանեկան հարաբերություններին, ժողովրդական բանահյուսությանն ու արվեստին վերաբերող բոլոր հնարավոր հարցերը, ինչպես նաև անհրաժեշտ ցուցումներ դաշտային նյութեր հավաքելու կարգի մասին։

Այս շրջանում բեղմնավոր գործունեություն է ծավալում հայ սովորութական իրավունքին վերաբերող իր ուշագրավ հոդվածներով դեռևս «Ազգագրական հանդեսից» հայտնի Խ. Սամվելյանը։ Հայ ազգագրության մեջ առհասարակ Խ. Սամվելյանը յուրահատուկ տեղ է գրավում։ Կրթությամբ լինելով իրավաբան և որպես այդպիսին մուտք գործելով ազգագրության բնագավառը, նա արժեքավոր աշխատանք է կատարել հայ ժողովրդի սովորութական իրավունքի բազմակողմանի հետազոտության և դրա հետ կապված հայ պետական ու սովորութական իրավունքների աղերսները, որ է՝ պետական իրավունքի ակունքների հարցերը հետազոտելու բնագավառում։ Այդ ուղղությամբ նրա կատարած երկար տարիների աշխատանքի արդյունքն է հայ իրավունքի պատմությանը նվիրված աշխատությունը, որը կառուցված է գլխավորապես ազգագրական նյութերի հիման վրա՝ քաղված հայ մատենագրական և ազգագրա-

---

6 Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969։ Իսկ «Армяне Нагорного Карабаха» աշխատանքը ներկայումս պատրաստվում է հրատարակության։

7 Ст. Лисициан, Очерки этнографии дореволюционной Армении, «Кавказский этнографический сборник» (КЭС), М., 1955, 1 (Новая серия), т. XXVI.

8 Ստ. Լիսիցյան, Ազգագրական հարցարան, Երևան, 1946։

9 Հայ իրականության մեջ ազգագրական առաջին համապարփակ հարցարանը կազմեց Գ. Արվանձտյանցը։ Այն զետեղված է նրա «Գրոց-բրոցի» մեջ (Կ. Պոլիս, 1874)։ Այնուհետև, 1887 թ. Մոսկվայում լույս է տեսել նախորդից ավելի ընդարձակ, Գ. Խալաթյանցի կազմած «Որագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորություններին» վերտառությունն ունեցող հարցարանը։

կան աղբյուրներից[10]։ Խ. Սամվելյանը, սակայն, իր տարիների հետազոտությունների արդյունքները ամփոփեց հին մշակույթի բազմակողմանի և ծավալուն ուսումնասիրությանը նվիրված եռահատոր աշխատության մեջ[11]։ Հեղինակը մինչ այդ մայրիշխանությանը, տոտեմիզմին, արյան վրիժառությանը, գնմամբ և առևանդմամբ ամուսնությանը և այլ հարցերի նվիրված հոդվածներով տվել էր հայ հոգևոր մշակույթի զարգացման հիմնական ուրվագծերը։ Սույն աշխատությամբ նա փորձ արեց, հենվելով ազգագրական, հնագիտական, մատենագրական և այլ կարգի նյութերի վրա, վերականգնել նախնադարյան-տոհմային կարգերի պատկերը հին Հայաստանում։

Այս շրջանում արվում է նաև մի շատ արժեքավոր գործ՝ երկար տարիների համատեղ աշխատանքի շնորհիվ Ե. Լալայանը և Խ. Սամվելյանը կազմում են հայ ազգագրության առաջին ընդարձակ մատենագիտությունը, ընդգրկելով XIX դ. և XX դ. առաջին 15-ամյակի արևելահայ պարբերական մամուլի նյութերը (պահվում է Հայաստանի պատմության պետ. թանգարանի արխիվում)։ Խ. Սամվելյանը վերջացնում է նաև հայ ազգագրության պատմության ակնարկների շարադրումը (պահվում է ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր կենտրոնական պետական արխիվում)։

Այս շրջանում, նշված աշխատանքներին զուգընթաց, սիստեմատիկ գործունեություն է ծավալվում նաև թանգարանային աշխատանքների գծով։ Գիտարշավախմբերի և այլ միջոցներով հարստացվում են և համալրվում Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրական ֆոնդերը։ Զեռք են բերվում հատկապես Արևմտյան Հայաստանի որոշ լեռնային գավառներին՝ Շատախին, Մոկսին, Սասունին վերաբերող ցուցանմուշներ։ Գրեթե ամբողջական են դարձվում Բարձր Հայքի, Լոռու, Զանգեզուրի, Մեղրու, Ղարաբաղի հավաքածուները։ Զեռք են բերվում լուսանկարների և գեղանկարների ազգագրական հարուստ ժողովածուներ։

Այս ամենի հիման վրա հնարավոր է դառնում թանգարանում կազմակերպել ազգագրական ցուցադրություններ, որոնցից հատկապես հիշարժան է 1932 թ. բացված Զանգեզուր-Մեղրու ցուցասրահը, որը գոյություն ունեցավ մի քանի տարի։

Թանգարանային աշխատանքների ծավալման բնագավառում այս շրջանում մեծ է հատկապես Ստ. Լիսիցյանի երախտիքը, որին իրավամբ կարելի է համարել ազգագրական թանգարանային գործի հիմնադիրն ու անխոնջ զարգացնողը Սովետական Հայաստանում։ Նրա հենց այդ ծառայություններն էլ նկատի ունենալով, ՀՍՍՀ կառավարությունը Ստ. Լիսիցյանի մահից հետո Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրական բաժինը կոչեց նրա անվամբ։

1920—1940 թթ., այսպիսով, հանդիսացան այն տարիները, երբ Հայաստանում ազգագրության գծով հիմք դրվեց և սկսեց ծավալվել թանգարանային գործը։ Հայ ազգագրության բնագավառի նախասովետական շրջանից արդեն հայտնի մասնագետները նոր պայմաններում ստանալով լայն հնարավորություններ և հենվելով իրենց բազմամյա փորձի վրա, ծավալեցին արդյունավետ

10 Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, Երևան, 1939։

11 Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. 1, Երևան, 1931, հատ. 2, 3, 1941։

հավաքչական և հետազոտական աշխատանք, դրանով որոշակի ներդրում կատարելով սովետահայ ազգագրության զարգացման բնագավառում։ Ե. Լալայանը հիմնականում շարունակեց դաշտային նյութերի հավաքումը և դրանց նկարագրական բնութագրումը, Ստ. Լիսիցյանը մեծ եռանդով առաջ տարավ թանգարանային գործը և նյութերի թեմատիկ հետազոտությունը, իսկ Խ. Սամվելյանը բազմակողմանիորեն ուսումնասիրեց հարուստ նյութը. խնդիրներ, որոնք, իսկապես, հրատապ և խիստ կարևոր էին։

Հայրենական պատերազմի տարիներին սահմանափակվում է ազգագրական աշխատանքների ծավալը՝ ընդհատվում է դաշտային նյութերի հավաքումը, վերսկսվելով միայն 1944 թ.։ Այնուհետև, գրեթե մի տասնամյակ էլ ազգագրական հետազոտությունները շարունակվում են կատարվել Հայաստանի պատմության պետ. թանգարանում։ Այդ տարիներին Ստ. Լիսիցյանի և ականավոր ազգագրագետ-կովկասագետ Մ. Օ. Կոսվենի ղեկավարությամբ պատրաստվում են երիտասարդ ազգագրագետների նոր կադրեր, որը հնարավորություն է տալիս 1953 թ. ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում ստեղծելու ազգագրության խումբ, իսկ ավելի ուշ՝ 1959 թ., ՀՍՍՀ ԳԱ նորաստեղծ հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ ազգագրության բաժին։ Այս ամենի արդյունքը լինում է այն, որ ազգագրության բնագավառում տարվող գիտահետահետազոտական աշխատանքները հետզհետե կենտրոնացվում են առավելապես ինստիտուտում, իսկ թանգարանը շարունակում է հիմնականում զբաղվել ֆոնդերի հարստացմամբ, գիտական մշակմամբ և ցուցադրությունների կազմակերպմամբ։

Միաժամանակ հնարավորություններ են ստեղծվում նաև ազգագրագետների նոր կադրեր պատրաստելու համար։ Թանգարանից եկած ազգագրագետների կադրերը համալրվում են ասպիրանտուրայի և գործնական աշխատանքի միջոցով պատրաստված երիտասարդ մասնագետներով, որոնք ընտրվում են ինչպես Երևանի բուհերը ավարտածներից, այնպես էլ Մոսկվայի պետ. համալսարանի պատմության ֆակուլտետի ազգագրական բաժինը ավարտածներից։ Այս ընթացքում որոշ չափով համալրվում է նաև թանգարանի ազգագրական բաժնի անձնակազմը։

Վերջին տարիներին Երևանի պետ. համալսարանի պատմության ֆակուլտետում բացված հնագիտության, ազգագրության և աղբյուրագիտության ամբիոնը, ուր ավանդվում է շուրջ տասը ազգագրական առարկա, նոր հեռանկարներ է բացում առհասարակ ազգագրական գործը Հայաստանում ավելի լայնորեն ծավալելու, համալսարանում ազգագրական գիտա-ուսումնական բջիջ ստեղծելու համար։

Ետպատերազմյան շրջանում հայ ազգագրագետների գործունեության հիմքը դարձյալ մնում է դաշտային աշխատանքը, որը գնալով ծավալվում է։ Սակայն մի ամբողջ տասնամյակ արշավախմբերն ունեին սակավաթիվ անձնակազմ։ 1950-ական թթ. կեսերից սկսած, արշավախմբերը դառնում են բազմանդամ ու բազմապրոֆիլ և համատարած դաշտային հետազոտության են ենթարկում Սովետական Հայաստանի հիմնական ազգագրական շրջանները և Միության մյուս հանրապետությունների հայաբնակ վայրերը։ Մյուս կողմից էլ ինստիտուտի կազմում բանագետների և ժողովրդական պարարվեստի մասնագետների առկայությունը հնարավորություն ընձեռեց ձեռնարկելու համաչափ ինչպես դաշտային, նույնպես և հրատարակչական գործունեություն։ Աս-

գագրական արշավանքների մեջ ընդգրկվեցին նաև պրակտիկանտներ՝ Երևանի պետ. համալսարանի, Ա. Արովյանի անվան պետ. մանկավարժական ինստիտուտի, Մոսկվայի պետ. համալսարանի ուսանողներից։

Հավաքված նյութերը օգտագործվում են ինչպես թեմատիկ պլանային աշխատանքներում, այնպես էլ հիմք են հանդիսանում ընդհանրացնող ծավալուն աշխատությունների համար, որոնք ընդգրկում են ժողովրդի կենցաղի, սովորությունների ու մշակույթի բոլոր կողմերը։ Մեծ գիտարշավախմբերը միաժամանակ դաշտային աշխատանքները տեխնիկապես հագեցնելու լայն հնարավորություններ են ընձեռում։ Դրանց կազմում անպայման ընդգրկվում են լուսանկարիչ, գեղանկարիչ-ճարտարապետ, ձայնագրող՝ համապատասխան սարքավորումներով։ Մեծ խմբարշավներին զուգահեռ կիրառվում է նաև փոքր ջոկատների և անհատական ուղևորությունների կարգով դաշտային նյութեր հավաքելու գեռևս անցյալից եկող և մեր պայմաններում ևս իրեն միանգամայն արդարացնող եղանակը։

Դաշտային հետազոտությունների նշված եղանակների կիրառման միջոցով հատկապես վերջին տասնամյակներում հնարավոր է եղել ընդգրկելու Հայաստանի գրեթե բոլոր հիմնական պատմա-ազգագրական շրջանները։ Դաշտային նյութեր են հավաքվել նաև Վրացական ՍՍՀ հայաբնակ վայրերում (Ախալքալաքի, Ախալցխայի, Բոգդանովկայի, Բոլնիսի, Դմանիսի շրջաններ), Աբխազական ԻՍՍՀ-ի, Ռոստովի մարզի (Մյասնիկյանի շրջան), Կրասնոդարի երկրամասի հայաբնակ գյուղերում, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում (Արցախի պատմա-ազգագրական շրջան)։

Ազգագրական դաշտային աշխատանքները ամփոփվում են Մոսկվայում կամ միութենական հանրապետությունների մայրաքաղաքներում ու խոշոր քաղաքներում արդեն քառորդ դար ավանդութեաբար տեղի ունեցող ամենամյա համամիութենական գիտական նստաշրջաններում, որոնց բոլորին էլ համապատասխան զեկուցումներով մասնակցում են նաև հայ ազգագրագետները։ Դրանք արտացոլվում են նաև ժամանակ առ ժամանակ հրատարակվող հակիրճ հաշվետվություններում[12]։

Այս շրջանում աստիճանաբար ուրվագծվում է հայ ազգագրագետների թեմատիկ նախասիրությունների շրջանակը։ Սրանցից յուրաքանչյուրը մասնագիտանում է առավելապես այս կամ այն պրոբլեմի հետազոտման մեջ, այն դարձնելով տարիների բազմակողմանի քննության առարկա։ Նկատի ունենալով այն պարագան, որ մինչ այդ համեմատաբար նվազ ուշադրություն էր դարձվել այնպիսի կարևոր պրոբլեմների վրա, որպիսիք են հայ ժողովրդի տնտեսական զբաղմունքների ու նյութական մշակույթի ազգագրական հետազոտությունը, ուժերը հիմնականում կենտրոնացվեցին դրանց շուրջը, պատշաճ տեղ հատկացնելով նաև մյուս բնագավառներին։ Հատկանշական է նաև

12 Ե. Լալայան, Կոտայք (հաշվետվություն), ՀԳԱԻ «Տեղեկագիր», Երևան, 1927, № 2։ Ст. Лисициан, Сообщение о результатах командировки в Дсег и Узунляр, для обследования крестьянских жилищ Лорийского района, «Бюллетень» КИАИ, Тифлис, 1929, № 5; Նույնի՝ Предварительный отчет о поездке в Акулисский район, նույն տեղում։ Д. Вардумян, Некоторые материалы по этнографии армян, «Краткие сообщения» Института этнографии им. Н. Н. Миклухо-Маклая АН СССР, М., 1960, т. XXXIII; Դ. Վարդումյան, Ռոստովի մարզի հայերի մշակույթի և կենցաղի մասին, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), № 10, 1961։

այն, որ եթե դաշտային ուսումնասիրությունները կատարվում են ըստ առանձին պատմա-ազգագրական շրջանների ու խմբերի, ապա գիտահետազոտական թեմաներն ընտրվում և մշակվում են ըստ ժողովրդական մշակույթի այս կամ այն բնագավառի, ամեն կոնկրետ թեմայի դեպքում ընդգրկելով ամբողջ Հայաստանը։

Վերը նշված և մի շարք այլ միջոցառումների կիրառմամբ, տարիների ջանադիր աշխատանքի շնորհիվ, Հայաստանի ազգագրագետները մշակեցին և հրատարակեցին հայ ժողովրդի զբաղմունքներին, նյութական ու հոգևոր մշակույթին, հասարակական-ընտանեկան հարաբերություններին նվիրված մի շարք աշխատություններ։

Տևական ուսումնասիրության առարկա դարձան հայ ժողովրդի երկրագործական, անասնապահական զբաղմունքները, արհեստագործությունը, փոխադրության և կապի միջոցները, չափակշռային համակարգերը և հարակից այլ հարցեր։ Վ. Բդոյանը տարիների ջանադիր աշխատանքով հանգամանորեն տվեց հայ ժողովրդի երկրագործական մշակույթի բազմակողմանի շարադրանքը։ Նրա «Հայաստանի երկրագործական մշակույթը» ծավալուն աշխատանքի մասին առայժմ կարելի է պատկերացում կազմել հրատարակված մի շարք հոդվածների[13] հիման վրա։ Անասնապահական մշակույթը ևս դարձել է հատուկ ուսումնասիրության առարկա (Յու. Մկրտումյանի «Արևելյան Հայաստանի անասնապահության ձևերը» վերտառությամբ աշխատությունից առայժմ տպագրվել են առանձին հոդվածներ)[14]։ Արհեստագործության վերաբերյալ Վ. Աբրահամյանը հրատարակել է մի քանի աշխատություն[15]։ Թեմատիկ պատշաճ հետազոտության են ենթարկվել նաև հայ ժողովրդի տնտեսական զբաղմունքների հետ անմիջականորեն առնչվող փոխադրության ու կապի միջոցները[16] և չափակշռային համակարգերը[17]։

Հայ ժողովրդի նյութական մշակույթի և դրա հետ անմիջականորեն առնչվող կիրառական արվեստների հետազոտումը ևս զգալի տեղ է գրավել մեր ազգագրագետների թեմատիկայում։ Ուսումնասիրվել են հայկական գյուղական բնակավայրերի ու բնակարանների տիպերը (Դ. Վարդումյան), տարազը, ա-

---

13 Կարևորներն են՝ Հայկական բրիչները և վարող գործիքները XIX դարում, «Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության», հատ. 1, Երևան, 1964։ Земледельческая культура в Армении (автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук), Тбилиси, 1968; Շարացան սիստեմը Վանա լճի ավազանում, «Պատմա-բանասիրական հանդես». 1964, № 1։

14 Կարևորներն են՝ «Հյուսիս-արևելյան Հայաստանի հայերի տարեկան անասնապահական ցիկլը նախահեղափոխական շրջանում», ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1963, № 7։ Формы скотоводства и быт населения в армянской деревне второй половины XIX века, СЭ, 1968, № 4։

15 Վ. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ., Երևան, 1956։

16 Լ. Ն. Պետրոսյան, Հայ ժողովրդական փոխադրամիջոցներն ըստ մատենագրության, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1968, № 9։ Նույնի՝ Էջեր Հայաստանի փոխադրամիջոցների զարգացման պատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3։

17 Ռ. Վարդանյան, Օրավարը որպես հողի մակերևսի չափի միավոր, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2։ Նույնի՝ «Աշխարհացույցի» ընդարձակ և համառոտ խմբագրությունների չափագիտական աղյուսակների լուսաբանության նոր փորձ, նույն տեղում, 1970, № 3։

գանելիքն ու բանվածքային արվեստը, ուտեստներն ու ըմպելիքները, գորգագործությունն ու խեցեգործությունը[18]։

Ուշագրավ է, որ վերջին քսանհինգ տարում հայ ազգագրագետների թեմատիկայում կարևոր տեղ է գրավել կոլտնտեսային գյուղացիության և բանվոր դասակարգի ազգագրական ուսումնասիրությունը։ Գրվել են աշխատություններ այս պրոբլեմի շուրջը, որոնց մի մասը հրատարակվել է[19]։ Այսպիսով, փորձ է արվել գիտականորեն բացատրելու կենցաղային այն երևույթները, որոնք առնչվում են հայ ժողովրդի հասարակական-տնտեսական կյանքում սոցիալիստական շինարարության ընթացքում տեղի ունեցած արմատական վերափոխությունների հետ։

Այս շրջանում շարունակվեցին ընտանիքի պրոբլեմին, ինչպես նաև հնագույն հասարակական հաստատությունների ու հարաբերությունների վերապրուկներին նվիրված հետազոտությունները։ Սովետահայ ընտանիքի ուսումնասիրությանը զուգընթաց մշակվեցին հայ ընտանեկան համայնքին, ազգակցական հարաբերություններին, նվիրագործության ծեսերին և հարսանեկան սովորույթներին վերաբերող թեմաներ և հրապարակվեցին մի շարք ուշագրավ աշխատություններ[20]։

Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի ուսումնասիրման գործում ևս զգալի ներդրում ունեն մեր ազգագրագետները։ Մշակվել են հավատալիքներին ու

---

18 Д. С. Вардумян, Характеристика основных этнографических районов Армении в XIX веке, М., 1964; *Ստ. Մնացականյան, Հայաստանի գյուղական բնակավայրերի ճարտարապետությունը, Երևան, 1956։ Ս. Վարդանյան, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետությունը, Երևան, 1959։ Ն. Պապուխյան, Գլխատան ճարտարապետական կոմպլեքսը Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններում, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3։ Ա. Պատրիկ, Հայկական տարազ, Երևան, 1967։ Ս. Դավթյան, Հայկական ժանյակ, Երևան, 1966։ Ն. Ավագյան, Հայկական գուլպաներն ու սոնապանները և նրանց զարդանախշերը, «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4։ Վ. Թեմուրճյան, Գորգագործությունը Հայաստանում, Երևան, 1956։ Ե. Սարգսյան, Խեցեգործության «ծեփածո» տեխնիկան հայերի մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2։ Նույնի՝ Հայերի բրուտագործական ձեռքի դուրգի ուսումնասիրության շուրջը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1968, № 5։*

19 *Դ. Վարդումյան, Լոռեցիների նոր կենցաղը, Երևան, 1956։ Վ. Բդոյան, Հայկական կոլտնտեսային տունն ազգագրական տեսակետից, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1955, № 4։ Նույնի՝ Հայ կոլտնտեսային ընտանեկան հարաբերությունները, նույն տեղում, 1956, № 7։ Դ. Վարդումյան, Է. Կարապետյան, Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Երևան, 1963։* К. В. Сехбосян, Промышленный Ленинакан как объект этнографического изучения, *ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1966, № 8։ Նույնի՝ Լենինականցիների ժամանակակից հարսանիքը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1963, № 9։*

20 Э. Карапетян, Выкуп в свадебных обрядах армян и его социально-экономические корни, *ՊՊԹ «Աշխատություններ», հատ. 3, 1950։ Նույնի՝* Армянская семейная община, Ереван, 1958; *Նույնի՝ Տանու ծառաների ինստիտուտը Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 9։ Նույնի՝* Родственная группа „азг" у армян, Ереван, 1966; В. Бдоян, Кровно-родственный „азг" и родственные отношения у армян, СЭ, 1952, № 1; Л. Варданян, Пережитки института инициаций у армян, *«Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4։* Ю. И. Мкртумян, Некоторые формы сообществ в армянской деревне, *նույն տեղում, 1967, № 4։ Թ. Կ. Խաչատրյան, Հասակակիցների միությունները Զավախքում, նույն տեղում, 1968, № 1։*

պաշտամունքներին, ժողովրդական տոներին ու հեթանոսական դիցարանին և հարակից այլ հարցերի նվիրված մի շարք թեմաներ[21]։

Հոգևոր մշակույթի յուրատեսակ բնագավառի՝ ժողովրդական խաղերի հետազոտությանը նվիրված աշխատությամբ (որի առաջին մասն է տակավին հրատարակվել)[22] Վ. Բդոյանը ներկայացնում է դրանք հնարավոր տարբերակներով, գիտական դասակարգմամբ, կցելով ծավալուն ներածական։

Հոգևոր մշակույթի հույժ ինքնատիպ բնագավառի՝ հայ ժողովրդական պարարվեստի և թատերական ներկայացումների բաղմակողմանի ու հանգամանալից հետազոտությանն է նվիրված բակմարդյուն աղգագրագետ-բանագետ Սրբուհի Լիսիցյանի ստվարածավալ աշխատությունը։ Մի քանի հատորից բաղկացած սույն աշխատությամբ (որի առաջին հատորը լույս տեսավ 1958 թ.[23], իսկ երկրորդը հրատարակման ընթացքի մեջ է) բաղմաղան ու հարուստ նյութերի (մատենագրական, դաշտային, մանրանկարչական, լեզվաբանական, համեմատական և այլն) հրման վրա, կարելի է ասել սպառիչ կերպով, քննաբար ներկայացվում են հայ ժողովրդական հինավուրց պարերն ու թատերական ներկայացումներն ըստ Հայաստանի առանձին պատմա-աղգագրական շրջանների, վերլուծվում դրանց ծագումնաբանությունը, տոնա-ծիսային ամբողջական կոմպլեքսը՝ սերտորեն աղերսված ժողովրդի տնտեսական զբաղմունքների, արտադրական գործունեության, պատկերացումների ու հավատալիքների հետ։ Այս աշխատությունը նսև խիստ ուսանելի է աղգագրական ու բանահյուսական, ինչպես և հարակից այլ կարգի նյութերի համամասնական հետազոտության առումով։ Սրբ. Լիսիցյանն առհասարակ մեծ վաստակ ունի հայ աղգագրության մեջ. սկսած դեռևս 1920-ական թթ. և մինչև օրս նա անխոնջ կերպով անձամբ և իր իսկ պատրաստած կագրերի միջոցով մեծաքանակ բարձրորակ դաշտային նյութեր է կուտակել, որոնք հարուստ աղբյուր են ոչ միայն պարարվեստի, այլև ընդհանուր առմամբ աղգագրության բնագավառում հետագա ուսումնասիրությունների համար։

Վերջապես, նշանակալից գործ է արված հայ ժողովրդի՝ նախկինում գրեթե անտեսված առանձին աղգագրական շրջաններին ու խմբերին վերաբերող համակողմանի նկարագրական նյութեր ձեռք բերելու և ուսումնասիրելու բնագավառում։ Այդ նյութերը մեծ մասամբ վերաբերում են Արևմտյան Հայաստանին (Վասպուրական, Բարձր Հայք, Սասուն, Դերսիմ, Մոկս, Սատախ, Համշեն և այլն) և ձեռք են բերվում սիրող-բանահավաքների միջոցով, որոնք արդեն պատկառելի տարիքի հասած տեղացիներ են՝ փրկված մեծ եղեռնից։ Այս կերպ անդառնալի կորստից փրկվում են արևմտահայերի աղգագրությանը վերաբերող նյութերը։ Բացառիկ արժեքավոր նյութերը պարբերաբար հրատա-

---

21 Վ. Բդոյան, Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ, ՊՊԹ «Աշխատություններ», 1950, հատ. 3։ Կ. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963։ Ա. Օդաբաշյան, Քրիստոնեական ամանորի հետ կապված որոշ ծիսական վերապրուկներ, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. դիտ.), 1968, № 3։ Նույնի՝ Ժողովրդական հավատալիքների մի քանի վերապրուկների մասին, նույն տեղում, 1962, № 2։ Նույնի՝ Հայերի մեջ նոր տարվա տոնակատարության հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2։

22 Վ. Բդոյան, Հայ ժողովրդական խաղեր, 1, Երևան, 1963։

23 С. С. Лисициан, Старинные пляски и театральные представления армянского народа, т. I, Ереван, 1958.

բակվում են[24]։ Վերջին տարիներին ստեղծված «Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ)» մատենաշարի շնորհիվ դրանց հրատարակման գործը դրվեց ավելի հաստատուն հիմքերի վրա։ Արդեն լույս է տեսել մատենաշարի առաջին պրակը, ուր զետեղված են Վ. Թեմուրճյանի «Գամիրքի հայերը» և ամերիկահայ բանասեր Ե. Տեր-Մկրտչյանի «Վանեցոց հարսանիքը» աշխատանքները[25]։ Հաջորդ պրակում զետեղված է Գ. Հալաջյանի «Դերսիմի հայերի ազգագրությունը» ծավալուն աշխատանքը (հրատարակման ընթացքի մեջ է)։ Այսպիսով, նոր ձևով վերականգնվում են «Ազգագրական հանդեսի» ավանդույթները։

Պատշաճ տեղ է հատկացվել հայ ազգագրության տեսության ու պատմության և ազգագրական ժառանգության ուսումնասիրման հարցերին[26]։

Հայ ազգագրագետները սերտ կապերի մեջ են Միության մյուս ազգագրական կենտրոնների, առաջին հերթին ՍՍՀՄ ԳԱ ազգագրության ինստիտուտի (Մոսկվա.—Լենինգրադ) և Վրաստանի ու Ադրբեջանի ազգագրագետների հետ և գործուն մասնակցություն են ունենում ամենամյա գիտական նստաշրջանների աշխատանքներին, ինչպես նաև համաձկովկասյան բնույթի կոլեկտիվ հրատարակություններին։ Հայ ազգագրագետների ջանքերով պատրաստվեց ՍՍՀՄ ԳԱ ազգագրության ինստիտուտի կողմից հրատարակված «Աշխարհի ժողովուրդները» մատենաշարի «Կովկասի ժողովուրդները» հատորի «Հայեր» բաժինը[27]։

Հայ ազգագրագետները ներկայումս էլ մասնակցում են ՍՍՀՄ ԳԱ ազգագրության ինստիտուտի նոր հրատարակությունների նախապատրաստմանը. պատրաստվում է Կովկասի պատմա-ազգագրական ատլասը, որի հայերին վերաբերող բաժինը կազմում են հայ ազգագրագետները։ Արդեն ընթացքի մեջ է առաջին չորս պրակի կազմումը (երկրագործական մշակույթ, անասնապահական մշակույթ, բնակավայր-բնակարան, տարազ-զարդարանք)։ Ատլասի հրատարակումը, որ նախատեսվում է առաջիկա հնգամյակին, սովետական ազգագրագետների խոշոր նվաճումը կլինի։

---

24 Վ. Պետոյան, Սասնա ազգագրությունը. Երևան, 1965։ Ե. Կարապետյան, Սասուն (ազգագրական նյութեր), Երևան, 1962։

25 «Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ)», I. Երևան, 1970։

26 Ст. Лисицян, Армянская этнография за 15 лет. СЭ, 1936, № 4—5. Д. С. Вардумян, Этнографическая работа в Армении в 5—6 пятилетиях, նույն տեղում, 1956, № 3; նույնի՝ Армянская этнография за годы Советской власти, նույն տեղում, 1962, № 5; Э. Т. Карапетян, К 60-летию армянского этнографического периодического издания «Азгагракан андес», նույն տեղում, 1956, № 2; К. В. Мелик-Пашаян, Жизнь и деятельность Ерванда Лалаяна, նույն տեղում, 1965, № 2. նույնի՝ Սովետահայ ազգագրության անցած ուղին, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1968, № 11։ նույնի՝ Ստեփան Լիսիցյան (ծննդյան 100-ամյակի առթիվ), «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4։ Ա. Օդաբաշյան, Խաչիկ Սամվելյանը ազգագրագետ, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 11։ Д. С. Вардумян, Этнография, «Академия наук Армянской ССР за 25 лет», Ереван, 1968.

27 Д. С. Вардумян, С. Т. Еремян, С. Д. Лисицян, Э. Т. Карапетян и др., Армяне, «Народы Кавказа» («Народы мира»), ч. II, М., 1962, под общей редакцией С. П. Толстова.